

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղրղզստանի Հանրապետության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ղրղզստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով երկու երկրների միջև ձևավորված բարեկամական կապերը,

ելնելով իրենց երկրների միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու անհրաժեշտությունից,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրին, ինչպես նաև իրենց երկրների ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, կնպաստեն երկու երկրների միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառում համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը բոլոր մակարդակներով:

### Հոդված 2

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը կրթության, գիտության և մշակույթի բնագավառում: Այդ նպատակով նրանք՝

կաջակցեն կրթական, գիտական և մշակութային հաստատությունների միջև ուղղակի կապերի հաստատմանը և զարգացմանը անմիջական պայմանավորվածությունների հիման վրա,

կապահովեն ներկայացուցիչների մասնակցությունը երկու երկրներում անցկացվող գիտական և գիտամեթոդական սեմինարներին, կոնֆերանսներին, գիտաժողովներին և այլ միջոցառումներին, ինչպես նաև համագործակցությունը համատեղ գիտական նախագծերի և ծրագրերի իրականացման գործում,

կխրախուսեն ընդհանուր և մասնագիտական-տեխնիկական կրթության բնագավառում համագործակցության մյուս ձևերը,

կաջակցեն համագործակցությանը երաժշտական արվեստի, թատերական արվեստի, կերպարվեստի, թանգարանների, գրադարանների, ինչպես նաև կինեմատոգրաֆիայի բնագավառում:

Փոխանակումների կոնկրետ ձևերն ու պայմանները կկարգավորվեն երկրների շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների միջև՝ համապատասխան համաձայնագրերով:

### Հոդված 3

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը երկու երկրների գիտությունների ակադեմիաների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև:

### Հոդված 4

Կողմերը կհամագործակցեն կրթության և գիտության գիտատեխնիկական բազայի զարգացման հարցերում, կխրախուսեն նոր տեխնոլոգիաները: Գիտական հաստատությունների ու կազմակերպությունների համար փոխշահավետ պայմաններով կիրականացվեն տեխնիկական միջոցների և սարքավորումների առաքում:

### Հոդված 5

Կողմերն իրենց երկրների լեզվի, պատմության, գրականության և մշակույթի ուսումնասիրման նպատակով կնպաստեն դրանց առնչվող մասնագետների փոխանակումների կազմակերպմանը, ուսումնամեթոդական ձեռնարկների ու նյութերի փոխանակմանը, ինչպես նաև համապատասխան մասնագիտացված ցուցահանդեսների կազմակերպմանը:

### Հոդված 6

Կողմերն, իրենց երկրների ազգային օրենսդրության սահմաններում և միմյանց հետ համաձայնեցված պայմաններով, իրենց երկրներում կոյուրացնեն, համապատասխանաբար, մյուս Կողմի կրթական և մշակութային հիմնարկությունների կազմակերպումը և գործունեությունը:

### Հոդված 7

Կողմերը կաջակցեն գեղարվեստական փառատոների, համույթների և մենակատարների հյուրախաղերի անցկացմանը, մյուս Կողմի հեղինակների երաժշտական և դրամատիկական ստեղծագործությունների բեմադրություններին, գեղարվեստական ցուցահանդեսների փոխանակումներին:

## Հոդված 8

Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կարող են սույն Համաձայնագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կհանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Փոփոխությունների և լրացումների վերաբերյալ արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

## Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա համար անհրաժեշտ՝ երկու երկրների ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ճանապարհով փոխադարձաբար իրազեկ դարձնելու պահից և գործում է հինգ տարի ժամկետով:

Այն կարող է ինքնաբերաբար երկարաձգվել ևս հինգ տարով, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չտեղեկացնի Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Համաձայնագրով նախատեսված ծրագրերի հետ կապված այն աշխատանքների իրականացմանը, որոնք սկսվել, բայց չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի ապրիլի 21-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղրղզերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Հայերեն և ղրղզերեն օրինակներում տարաձայնությունների առկայության դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1998 թվականի հոկտեմբերի 1-ից: